

10888

Մ. ԿԵՆՏ. ԲՅՈՒՐՈՑԻՆ ԿԻՅ ԿՈԼԿԱՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Խ. Ս. Հ. Մ. ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
Կ Ա Ռ Ո Ւ Յ Վ Ա Ծ Ք Ը

3-րդ դաս

Կազմեց յեկ փոխադրեց Պ. Հարությունյան

ՅԿԻՈՊ
2-42

Թ Ի Տ Լ Ի Ս
1930

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպությունը՝ դա մարդ-
 Ինքն է ԿԱԶՄԱԿԵՐ-
 ՊՈՒԹՅՈՒՆԸ
 կանց համախմբությունն է՝ նշված
 ընդհանուր նպատակին հասնելու հա-
 մար: Նա մի կողմից համախմբում է իր անդամներին
 ամուր կողքիկողքի մեջ, լծում է յուրաքանչյուրին վո-
 բոջ աշխատանքի, տալով նրան իր ուժերի համեմատ
 պարտականություն, և մյուս կողմից՝ կազմակերպու-
 թյունը բարձրացնում է իր անդամներին աշխիվու-
 թյունը, կարգապահությունն ու պատասխանատու-
 թյունը:

ԼԵՆԻՆԸ կազմակերպութեան լավագույն որինակ-
ներէց մեկը համարում եր ժամանակակից գործը. նա
«Զուրդ ինտերնացիոնալի վախճանը» գրքում հետեւյալն
ե գրել. «Վերցնենք ժամանակակից գործը: Ահա կազ-
մակերպութեան լավագույն նմուշներից մեկը: Լավ ե
այդ կազմակերպութեանը միայն նրա համար, վոր
նա ճկուն ե, կարողանալով միաժամանակ միասնական
կամք տալ միլիոններին: Այսոր այդ միլիոնները
նստած են իրենց տներում, յերկրի տարբեր ծայրե-
րում, վաղը մոբիլիզացիայի հրաման ե, ե նրանք հա-
վաքվում են նշանակված կետերը: Այսոր նրանք պառ-
կում են խրամատներում՝ յերբեմն ամիսներով: Վաղը
նրանք մեկ ուրիշ կարգով գրոհի են գնում: Այսոր
նրանք հրաշքներ են գործում պահվելով գնդակներէց

1930

2-я типография Госиздата Грузии ул. Ленина, № 3.

Гл. 2163.

Зак. 798.

Тир. 2000.

և շրապնելից: Վաղը հրաշքներ են գործում բաց մարտում: Այսօր նրանց առաջավոր դնդերն ականներ են դնում գետնի տակ: Վաղը նրանք տասնյակ վերստեր են արշավում ողաչունների ցուցմունքներով: Ահա դա յե կոչվում կազմակերպություն, յերբ հանուն մի նպատակի, մի կամքով վոգևորված, միլիոնավոր մարդիկ փոխում են իրենց փոխհարաբերություն, գործողության ձևերը, փոխում են տեղը և գործունեություն, պրիոմները, փոխում են գործիքները, պայքարի պահանջների և պայմանների համեմատ»:

ԻՆՋՈՒ ՀԱՄԱՐ Ե
ՀԱՐԿԱՎՈՐ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
Կազմակերպությունը նրա համար և հարկավոր, վորպեսզի նրա յուրաքանչյուր անդամն աշխատի ծրագրով և իր տեղում կատարի հանձնարարված աշխատանքները: Իր անդամներից յուրաքանչյուրին կազմակերպությունն ուժ և յեռանդ և տալիս, ոգնություն և հասցնում: Կազմակերպությունից դուրս մարդը փոշի յե: Գերնլեն իր գրքում—«Կոմունիստական պատանեկական խմբերը»—հետևյալ միտքն և արտահայտում. «Յերեխան մենակ չի կարող յերկարատև պայքար մղել: Նրա այդ պայքարում (գալոցում, փողոցում) մեծ նշանակություն ունի այն գիտակցությունը, վոր իր հետևից ամուր կանգնած և կոլլեկտիվը: Վոչ մի միտք չունի յերեխայի հետ քաջության և պայքարի մասին խոսել, առանց ստեղծելու նրա համար անհրաժեշտ պայմաններ: Յերեխայի մեջ պետք և ամրացած լինի մասսայի զգացմունքը, նա պետք և իր կազմակերպության մեջ հենարան տեսնի: Միայն, վորպես կազմակերպության անդամ, իր ընկերների ոգնություն, պրոլետարական յերեխան բռնի հարձակում-

ների, բոլոր ծաղրանքների հակառակ, քաջություն և հաստատակամություն կունենա հայտարարելու իրեն կոմունիստ: Այդ դեպքում միայն նա կարող և համարձակորեն գիմադրել ռեակցիոն ուսուցչին, տերտերին, հրաժարվել շովինիստական յերգեր յերգելուց»:

Յուրաքանչյուր կազմակերպության համար
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ
Ի լուրջ և լուրջ լինելով նպատակը, աշխատանքները:

Կազմակերպության նպատակը շատ պարզ և փոքր յալի պետք և լինի, վորովհետև նա բնորոշում և այն, ինչին պետք և ձգտեն տվյալ կազմակերպության բոլոր անդամները: Կազմակերպության անդամները պետք և լավ պատկերացնեն և հասկանան այդ նպատակները, հակառակ դեպքում շատ դժվար կլինի ընդհանուր, միասնական աշխատանք ձեռնարկել, ընդհանուր գործողություններ ունենալ:

Նպատակից յեղնում և աշխատանքի բովանդակությունը: Նպատակին արագ կերպով հասնելու համար անհրաժեշտ և նշել կոնկրետ խնդիրներ: Այդ կոնկրետ խնդիրները տվյալ ժամանակաշրջանում բնորոշում են կազմակերպության աշխատանքների բովանդակությունը:

Այնուհետև հետևում են կազմակերպական ձևերը, կազմակերպության ներսում պարտականությունների բաժանումը խմբերի և անդամների միջև և այլն:

Աշխատանքի մեթոդները պարզում են, թե ինչ միջոցներով, պրիոմներով պետք և իրագործվի աշխատանքի բովանդակությունը:

Այդ չորս ելեմենտները շատ ամուր կերպով կապված են միմյանց հետ, մեկը բղխում է մյուսից, մեկը մյուսին բնորոշում: Այդ ելեմենտներից է կազմվում յուրաքանչյուր կազմակերպութան կազմակերպչական կառուցվածքը: Այժմ պարզենք, թե ինչ պահանջների պետք է բավարարի պիոներական կազմակերպութան կառուցվածքը:

Առաջին. — Պիոներական կազմակերպության կառուցվածքը պետք է շատ ճկուն լինի և կարողանա հարմարվել բոլոր պայմաններին: Կոլլեկտիվները, ողակները միանգամայն ապահովում են այդ: Յերկրորդ. — Կազմակերպչական կառուցվածքն պետք է շատ պարզ և հասկանալի լինի պիոներներին և բոլոր մյուս յերեխաներին:

Յերրորդ. — Պիոներական կազմակերպության կառուցվածքը չի ընդօրինակում մեխանիկորեն մեծերի կազմակերպությունը, նա հաշվի չէ առնում յերեխաների հասակի առանձնահատկությունները և յեղնում է դրանցից: Դա մանկավարժության կարևորագույն պահանջներից մեկն է: Բայց մինչև հիմա խոսակցու-թյուններ են տեղի ունենում այն մասին, վոր պիոներական կազմակերպությունը պետք է դեն շարտե «սկսումներից վերցրված կազմակերպչական ձևերը» և կառուցվի մեծերի կազմակերպության նման: Վորպեսզի պարզ լինի, թե վորքանով սխալ է այդ տեսակետը, բավական է հիշել Ուկրաինայի փորձը:

Ուկրաինայում պատանի պիոներների կազմակերպությունն սկզբում կազմվել էր կոմյերիտմիության կազմակերպության նման (պատանեկական բլիշ-

ներ, կոնֆերանսներ, ընտրովի կոմիտեներ և այլն): Հայաստանում էլ սկզբնական շրջանում համարյա նման դրույթուն էր: Ուկրաինայի կոմյերիտմիությանն անթույլատրելի յեր համարում ընդհանրապես պատանեկական կոմմունիստական խմբերի աշխատանքների համար ոգտվել սկսումական մեթոդներից, ձևերից: Յեվ այդ պատճառով, մինչև իսկ մեր տեսակետից, սկսումական լավագույն մեթոդները ժխտվում էին: Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ դեռ 1923 թ. գրել է, վոր «պատանի պիոներների կազմակերպությունը չի կարող նման լինել մեծերի կազմակերպությանը, և դա շատ վատ կլինի յեթե իսկապես նա մեծերի կազմակերպության պատճենը լինի, դա կոպիտ սխալ կլինի...»: Յեվ իսկապես շնորհիվ նրան, վոր այդ կազմակերպությունն ընդօրինակում էր մեխանիկորեն մեծերի կազմակերպությանը, նա չէր կարողանում աշխատանքների մեջ գրավիչ, կենդանի մոմենտներ մտցնել, չէր կարողանում բավարարել յերեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց պահանջներին, և աշխատանքները կառուցում էր չոր, անհետաքրքիր գեկուցումների, ժողովների վրա:

Չորրորդ. — Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է նույնպես, վոր պիոներական շարժման կազմակերպչական ձևերը լայն կերպով զարգացնեն յերեխաների ինքնագործունեյությունը, առաջ բերեն նրանց ակտիվությունը, մաքսիմալ հնարավորություն տալ նրանց ուժերի զարգացմանը, տալով անհրաժեշտ ուղղություն:

Հինգերորդ. — Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է, վորպեսզի պատանեկական կոմմունիս-

տախան շարժման աշխատանքները, նրա ձևերն ու մեթոդներն իրենց բոլոր մասնիկներով գրավիչ, հետաքրքրական լինեն յերեխաների համար:

Վեցերորդ.—Վերջապես հեղափոխական մանկավարժութիւնը պահանջում է պիոներական կազմակերպութիւնների լինել մասսայական և վոչ թե նեղ, կղզիացած մի կազմակերպութիւն: Յեւ իսկապես, պիոներական շարժումը մասսայական մի շարժում է, վորն առաջին հերթին ընդգրկելով պրոլետարական յերեխաներին, հենվելով նրանց վրա, կարողանում է իրագործել կոմունիստական դաստիարակչական խնդիրները, կարողանում է պայքարել պրոլետարիատին խորթ ազդեցութիւնների դեմ յերեխաների վրա: Այդ բոլորը լրիվ կերպով իրենց արտահայտութիւնը գրտնում են պիոներական կառուցվածքում: Բայց գործնական աշխատանքներում դեռ թերութիւններ շատ կան: Պիոներական շարժման պատմութիւնը՝ դա հենց յերեխաների ինքնագործունեյության զարգացման, աշխատանքը մասսայական, գրավիչ դարձնելու պայքարի պատմութիւնն է: Կոմյերիտմիութիւնը շարունակ, ներկայումս ավելի, քան յերեկոց, պայքարում է՝ յերեխաների մեջ կոլեկտիվիզմ, պատասխանատւութիւն զգացմունք ամրացնելու համար, բոլոր միջոցները գործադրում է դաստիարակելու յերեխաներին համառ պայքարի վոգով՝ բանվոր դասակարգի գործի համար:

Կազմակերպութիւնն այնպես պետք է կառուցված լինի, վորպեսզի կոմյերիտմիութիւնն ուժեղ ազդեցութիւն ունենա նրա յուրաքանչյուր մասի

ԿՈՍՅԵՐԻՍՄԻՈՒ-
ԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒ-
ԹՅՈՒՆԸ

վրա, վերելից ներքև որդանապես կապված լինի նրա հետ:

Պատանի պիոներների կազմակերպչական կառուցվածքը պետք է շատ պարզ և վորոշակի կերպով արտահայտի, վոր պիոներական շարժումը՝ դա կոմյերիտմիութիւնն աշխատանքների մի մասն է կազմում, վոր յերեխաների մեջ տարվելիք աշխատանքը՝ դա կոմյերիտական կարևոր պարտականութիւններից մեկն է համարվում:

Պիոներական կազմակերպութիւնն մեջ, վերելից ներքև, ուժեղ կերպով ապահովված է կոմյերիտմիութիւնն ղեկավարութիւն: Բյուրոները կից են կոմիտեներին, կոլլեկտիվները՝ բջիջներին, կոլվարները՝ կոմյերիտականներ-կուսակցականներ են, կա կոմյերիտական կորիզը և այլն:

Կոմյերիտմիութիւնն համամիութե-
ն. Ս. Շ. Մ. ՊԻՈՆԵ-
ՐԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾԸ
նական Ծ-ը համադրմարից Պետո կենտ-
րոնական կոմիտեն մշակում է պիո-
ներական կազմակերպութիւնն կառուց-
վածքը: Այդ կառուցվածքի պահասութիւնը կայանում է նրանում, վոր այդտեղ, միայն կազմակերպչական ձևերի մասին է խոսվում, մինչպե՛ս յերեխաները և ամբողջ կազմակերպութիւնը պահանջում էին, վոր կառուցվածքում խտացված կերպով նշվի նաև աշխատանքների բովանդակութիւնը: Ներկայումս կազմակերպչական կառուցվածքը վորոշ փոփոխութիւն է յենթարկ-
ված, նա յերեք մասից է բաղկացած. 1) կազմակերպութիւնն նպատակը, 2) աշխատանքների բովանդակութիւնն հիմնական ուղղութիւնը, 3) կազմակերպչական ձևերը:

*Այժմ մենք կանգ կառնենք առանձին-առանձին
այդ մասերի վրա:*

1-ին Կազմակերպության նպատակը

«Լեհներ»-ի անվան պատանի պիոներների կոմունիստական պատանեկական կազմակերպության նպատակն է հանդիսանում՝ սալ յերեխաներին կոմունիստական դաստիարակություն, պատրաստել նրանցից կոմունիստական հասարակակարգի ասպագա մարտիկներ լինել շինարարներ:

Պատանի պիոներների կազմակերպությունը հանդիսանում է կոմյունիստական կից յերեխաների ինքնուրույն մի կազմակերպություն, ընդհանուր կոմունիստական շարժման յերրորդ ելուղը, փոխարինողների փոխարինողը:

Պրոֆմիությունները, լուսավորության յեվ առողջապահության մարմինները յեվ մյուս հասարակական կազմակերպություններն ակտիվ մասնակցություն են ցույց տալիս յեվ ոգևորում կոմյունիստական մասսայական աշխատանքներին՝ յերեխաների մեջ:

2-րդ Աշխատանքների բովանդակությունը

«Կոմունիզմի մարտիկներ յեվ շինարարներ պատրաստել արդեսարիտի պայմարից յեվ շինարարությունից դուրս՝ չի կարելի: Այդ պատճառով պիոներական կազմակերպության աշխատանքների բովանդակության հիմքը կազմում է՝ յերեխաների ակտիվ մասնակցությունը կուսակցության, կոմյունիստական յեվ երիտզային իշխա-

նության հեղափոխական շինարարական աշխատանքներին: Պիոներական կազմակերպությունը յեվ յուրաքանչյուր պիոներ հետևում է ԼԵՆԻՆԻ ավանդին— «Յուրաքանչյուր քաղաքում, յուրաքանչյուր գյուղում յերեսասարդությունը պետք է յուծի ընդհանուր աշխատանքի գործնական խնդիրները՝ բեկուզ ամենափոքր, ամենահասարակը»:

*Մանրությունը. — Ընդգծած տողերը՝ դրանք
կազմ. կառուցվածքից բերված քաղաքներն են:*

Պիոներական աշխատանքների բովանդակությունը հետևյալ գլխավոր ուղղությամբ է ընթանում: Պայքար տեսչիկական յեվ աշխատանքային գիտելիքների տարածման համար, աշխատանք դպրոցում, շրջապատի կենցաղի բարելավման մասին հոգատարություն, մասնակցություն պետական մարմինների յեվ հասարակական կազմակերպությունների աշխատանքներին՝ յերեխաների աշխատանքի յեվ իրավունքների պաշտպանության գործում: Պայքար անարդարությունների, սեփականացիության դեմ: Մասնակցություն քաղաքական-տնտեսական կարեվորագույն կամպանիաներին: Ինտերնացիոնալ, հակաերոնացական, կոլլեկտիվ դաստիարակություն: Յերեխաների ժամացի յտեղացի կազմակերպում: Ֆիզիկական յեվ ռազմական դաստիարակություն: Պրոպագանդա պիոներական շարժման համար՝ վորպես միջազգային կոմունիստական շարժման մասնիկը յեվ այլն:

Հիմնականն այն է, վոր պիոներական կազմակերպությունը յերեխաների հասարակական բոլոր ոգտվետեռնարկությունների նախաձեռնողը դառնա:

Աշխատանքների կատարման ժամանակ, ինչպես աւրողը կոլլեկտիվը, այնպես յեվ ողակն ու յուրաքանչյուր

պիոններ, պեժ և հաււի առնեն շարունակ այն ամենը, ինչին վոր կասարած աշխատանքի հետեւանալով սովորել են:

Պիոներները ձգտում են լինել առողջ, տկուր, զվարթ, համառ, համարձակ, ուշադիր, ամեն կերպ աշխատելով ձեռք բերել մարտիկի յեւ շինարարի անհրաժեշտ ունակութիւնները:

3-րդ. Կազմակերպչական ձեւերը

Կազմակերպչական կառուցված-
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- թում ասվում է, վոր «Պատանի պիոներ-
ՅԱՆ ԿԱԶՄԵ ների կազմակերպության մեջ ընդուն-

վում են 10—15 տարեկան բոլոր այն յերեխաները, վորոնք իրենց պատասխանատւութիւնն են հայտնում կասարել որեւէներ, մասնակցել կոլեկտիւ աշխատանքներին յեւ յենթակից կազմակերպության բոլոր վորոշումներին: Կազմակերպության մեջ մնալ կարելի յէ մինչեւ 16 տարեկան հասակը: Առաջին հերթին ընդունվում են բանվորների յեւ գյուղացիների յերեխաները—բացակները յեւ չհավորները»:

Մեր մարտական խնդիրը պետք է լինի 100 տոկոսով զբաղել բանվորների, չքավոր, բատրակ և կոլեկտիւ գյուղացիների յերեխաներին պիոներական կազմակերպութիւն շարքերը: «Մեզ մոտ կազմակերպութիւն մեջ բանվորների յերեխաները կազմում են 39 տոկ, գյուղացիների՝ 30 տոկոս, ծառայողների՝ 18,3 տոկոս, ալլը՝—12,1 տոկոս. չնայած ալլ կազմին, մեր գիծը պետք է լինի լայն կերպով ընդգրկել բանվորների, բատրակների յերեխաներին: Չնայած մեր կազմակերպութիւն սոցիալական լայն բազային, վոր

զգալիորեն լայն պետք է լինի, քան կոմյերիտիութիւնը, մենք չպետք է մոռանանք պիոներական շարժման դասակարգային եութիւնը: Մյուս կողմից՝ մենք աչքաթող չպետք է անենք վոչ պրոլետարական շերտերի յերեխաների զբաղման անհրաժեշտութիւնը պիոներական կազմակերպութիւն մեջ: Պետք է վերջ տալ ձայնազուրկների յերեխաների մեխանիկական գումանը, պետք է լայն բացատրական աշխատանք տանել այն մասին, թե ինչպե՜ս է հարկավոր վերաբերվել ազգաբնակչութիւն վոչ պրոլետարական շերտերի յերեխաներին, ինչու պետք է կազմակերպութիւն մեջ վերադաստիարակենք մեզ անհարգատ դասակարգերի յերեխաներին:

Մեր կազմակերպութիւն աճումը՝ դա մեր դասակարգային թշնամու դեմ ուղղված մի հարձակում է, վորը խլում է մարդկային մատերիալը նրա ազդեցութիւն տակից:

Թեզիսներում առաջադրված լողունը՝ «կազմակերպութիւն կրկնապատկումը» անպայման հանդիտում է միանգամայն ճիշտ և իրական: Տեղում կանգնած մնալու դրութիւնը հետագայում կարող է առաջ բերել անհամապատասխանատւութիւն կազմակերպութիւն խնդիրների և նրա գործնական աշխատանքների միջև: (Կոմյերիտիութիւն 6-րդ կոնֆերանսում ընկ. Սեւրյանովայի գեկուցումից):

Առաջին.—«Պատանեկական կոմունիստական շարժման հիմնական բոլոր հանգիստանում է կոլեկտիւ, վորը կազմակերպվում է կոմյերիտիւնի բոլորներին կից յեւ հաստատվում կոմ-

քերթսմության կոմիտեներին կից պիտու եր - բխուաների
կողմից»:

Կոլլեկտիվները կազմակերպվում են կոմսոմոլի
կողմից, վորովհետև հենց իր՝ պիտոներական շարժման
բնույթը պահանջում է ղեկավարութուն յերիտասար-
գության կողմից, վորը մոտ է այդ հասակին, և շատ
վաղուց չէ ինչ դուրս է յեկել այդ հասակից և կարող
է ավելի հեշտ, պարզ, ընկերական մոտեցում ունենալ
դեպի յերեսաները:

Կոլլեկտիվները, ինչպես ասված է կազմակերպ-
չական կառուցվածքում, կազմակերպվում են բլիշներին
կից: Իսկ բլիշները գտնվում են գործարաններին,
ֆաբրիկաներին կից, այսինքն այնտեղ, վորտեղ կենտ-
րոնացած է խորհրդային հասարակութունը: Դրանով
է գլխավորապես բացատրվում Հ. Կ. Կ. (Բ) 2-րդ հա-
մագումարի վորոշումն այն մասին, թե կուսակցու-
թյունը ղեկավարում է պիտոնական շարժումն ան-
միջականորեն կոմյերիտմության միջոցով:

Պատանեկական կոմմունիստական շարժման գո-
յության սկզբնական շրջանում Ուկրաինայի կոմյե-
րիտմությունը հիմնականում ծավալում է պատանե-
կական շարժումը դպրոցներում և մանկատներում, հա-
մարելով դրանց յերեսաների հասարակայնության
կենտրոն և այնպիսի կետեր, վորտեղ հնարավոր է
հաջողությամբ գործադրել սոցիալական դաստիարա-
րակության մեթոդները: շնորհիվ այդ բանի Ուկրաին-
այի կազմակերպությունը գտնվում է ինքնամփոփ
դրության մեջ, կտրված գործարանների, ֆաբրիկա-
ների և գյուղում գյուղացիական հասարակայնության
կյանքից:

Վերջին տարում պիտոնական աշխատողների մի
մասը լուսավորության մարմինների հավանությամբ
նորից խնդիր եյին դնում կոլլեկտիվները կազմակեր-
պելու դպրոցներին կից, այլ վոչ թե արտադրության
իրենց տեսակները պաշտպանելու համար, նրանք
պատճառաբանում եյին, վոր խորհրդային դպրոցի և
պիտոնական շարժման նպատակները մեկ են, կազմը
նույնն է, վոր դպրոցն իր մեթոդներով և հասարա-
կական աշխատանքներով մոտեցել է պիտոնական
շարժմանը և այլն: Դպրոցական սխտեմի այդ պաշտ-
պանների ցույց տված ուղին անշուշտ պետք է ժխտվի:
Ահա ինչ է ասում այդ առթիվ Մ. Վ. ԿրՈՒՊՆԻՆԱՆ
«Պատանեկական շարժումը՝ դա այն ավանգարդն է,
վոր դպրոցի համար ճանապարհ է բացում դեպի շրջա-
պատող սոցիալական կյանքը: Ահա ինչպիսին պետք
է լինի նա: Յեւ վոչ թե դպրոցում պետք է պահել նրան,
այլ ընդհակառակը, պիտոնական շարժման միջոցով
պետք է դպրոցը դուրս քաշել «դպրոցից» յեթե կարե-
լի յե այսպես արտահայտվել (Վաժատիյ նո-20, 1929 թ.):

Մինչև իսկ համատարած կոլլեկտիվացման շրջան-
ներում, վորտեղ դպրոցի և պիտոնական շարժման
զարգացման միանգամայն նոր պայմաններ են ստեղծ-
վում, չի կարելի պիտոնական կազմակերպության և
դպրոցի ձուլման խնդիր դնել, վորպես որվա կոնկրետ
խնդիր: Պետք է աշխատել ներկայումս, կատարված
փորձի հիման վրա, այդ պայմաններում ստեղծել դրո-
ցի և պիտոնական շարժման փոխարարներության
նոր ձևեր:

Յերկուրդ.— Կոլլեկտիվը պետք է համալսմբի մինչև
50 յերես: Յերե սվյալ բջիջին կից կազմակերպվում են

մի քանի կողմերից, այդ դեպքում նրանք համախմբվում են յեվ կազմում բազա, կազմելով ամեն կողմերի վրում առանձին խորհուրդ:

Ինչու կողմերի վր չպետք է 50-ից ավելի անդամներ ունենա, վորովհետեւ «Պիոներական կազմակերպությունը պետք է ձևուն լինի, վորպեսզի բոլոր պայմաններում, բոլոր պարագաներում կարողանա հարմարվել ամեն տեսակ աշխատանքի», վորպեսզի նրա աշխատանքները կատարվեն արագ, ճիշտ և խնայողաբար: Հենց դրա համար հարկավոր է, վոր պիոներական կազմակերպության կազմակերպչական միավորը շատ մեծ չլինի, վորովհետեւ ինչքան վորք լինի կազմակերպության բջիջը, մասնավորապես յերեխաների կազմակերպության, այնքան ավելի ձևուն և ամուր կլինի ամբողջ կազմակերպությունը» (Վոլկով. «Ինչպես է կառուցված Պ. Պ. կազմակերպությունը»): Մինչև իՄ կոմյերիտիության 6-րդ համագումարը, Ուկրաինայում, Անդրկովկասում և ուրիշ տեղերում, կազմակերպում էին մեծաքանակ կողմերի վր, վորոնք համախմբում էին յերեխաներին առանց սահմանափակելու նրանց թիվը, կային կողմերի վր, վորոնք իրենց մեջ բնագրկում էին մոտ 180—250 պատանիներ: Այդ ձևը պաշտպանողները պատասխանում էին վոր առաջին — «անհրաժեշտ է բոլոր յերեխաներին համախմբել մի ամբողջության մեջ: Յերկուրդ. — այդպիսի մեծ կողմերի վր ստեղծելու անհրաժեշտությունը թելադրվում է նրանով, վոր չունենք բավական թվով պատրաստված յեկավարներ: Յերկուրդ. — այդպիսի կողմերի վր հաջող կերպով զարգանում է յերեխաների ինքնազործունեությունը»:

Յուրաքանչյուր կողմար յուր փորձից յեկելով, հեշտությամբ կարող է ասել, վոր այդ տեսակետը սխալ է: Մեր ղեկավարներն իրենց թույլ պատրաստակամությամբ չեն կարող կազմակերպել մի քանի հարյուր հոգուց բաղկացած կողմերի վր աշխատանքը. ղեկավարից պահանջվում է, վորպեսզի նա լավ ճանաչի յուրաքանչյուր պիոներին, իմանա նրա պահանջները, կարողանա բավարարել նրանց: 100—200 հոգուց բաղկացած կողմերի վր կողմարը չի կարող ճանաչել բոլորին և հետևապես չի կարող հաշվի առնել նրանց պահանջները և հարկ յեղածին պես, ճիշտ կերպով կազմակերպել աշխատանքները:

Յերկուրդ. — «Կողմերի վր աշխատանքները ղեկավարելու համար կոմյերիտիության բջիջն առանձնացնում է մի կողմար, նրան ոգնելու համար՝ մի ոգնական յեվ մի քանի կոմյերիտականներ՝ կողմերի վր աշխատանքների տարբեր նյութերում աշխատանք սանելու համար: Բազայի աշխատանքները ղեկավարելու համար ստեղծվում է Բազային խորհուրդ, վորը վերցնում է վեց ամիսը մեկ անգամ:

Մեծ բազաների կազմի մեջ են մտնում՝ 1) բազային բնդհանուր հավաքումում բնագրված նախագահը յեվ ֆարսուդարը, 2) կողմերի վր նախագահներ յեվ ֆարսուդարներ, 3) Ֆորպոսի նախագահը յեվ ֆարսուդարը, 4) կոմյերիտիության բջիջի ներկայացուցիչը, 5) զանազան խմբակների ավագները (староста): Փոքր բազաներում խորհրդի կազմի մեջ մտնում են նախ ղեկավարներ:

Բազայի խորհուրդը պարբերաբար գումարում է

բազայի հավաքույթ՝ բազային վերաբերող խնդիրների
 քննութեան համար»:

Զորքուղ.— «Կոլլեկտիվի աշխատանքների ղեկավարը
 — դա կոլլեկտիվի խորհուրդն է, վորի մեջ մտնում են
 կոլլարը, ողակավարները (վորոնք վեց ամիսը մեկ ան-
 գամ վերընտրվում են) յեվ ցրանց ոգնականները, կոլլեկ-
 տիվի նախագահն ու փառնուղարը: Կոլլեկտիվի խորհուրդը
 ղեկավարում ու կազմակերպում է առողջա բոլոր աշ-
 խատանքները, պատրաստում է ողակավարներին, վորպես-
 զի ցրանք հաջողութեամբ կարողանան ողակային հավա-
 քույթներն անցկացնել, ծրագիր է կազմում, բնթացք է
 տալիս ֆորպոսի աշխատանքներին. գրադվում է ամրամ-
 ների հեռացման յեվ բնդունելութեան գործով»:

Պիոներական աշխատանքի վերջին տարիների
 փորձը մեզ թելադրեց հիմնովին փոփոխութեան յեն-
 թարկել այս կետը:

Ակտիվ մասնակցելով սոցիալիստական շինարա-
 րութեան աշխատանքներին, կատարելով կոմ. կուսակա-
 ցութեան կոմյերիտմիութեան և խորհրդային իշխանու-
 թեան հարվածային առաջադրութեանները, կոլլեկտիվ-
 ները պահանջում են ձկուն, հարվածային ղեկավարու-
 թյուն: Կոլլեկտիվի խորհուրդը, նման կազմով, շնորհիվ
 իր այդ ծանրաշարժութեան, չեր կարող այդպիսի ղեկա-
 վարութեան ցույց տալ: Կազմակերպչական կառուցված-
 քի համաձայն խորհուրդի մեջ են մտնում 5 ողակավար,
 5 ոգնական, 1 նախագահ, 1 քարտուղար, 1 կոլվար, 1
 կոլվարի ոգնական, 1 հոկտեմբերիկավար. այդպիսով 15
 հոգի: Շատ կոլլեկտիվներում այդ թվին ավելանում են
 նաև մի քանի հոգի ներկայացուցիչներ զանազան
 հասարակական կազմակերպութեաններէ: Պարզ և

վոր մի վորե և շտապ աշխատանք կատարելու, նման
 խորհուրդը ի վիճակի չէ: Մինչև հավաքվեն, մինչև
 քննութեան առնեն խնդիրները ժամանակն արդեն
 կանցնի: Յեվ այդ պատճառով հասկանալի յե, թե
 ինչու հարվածային աշխատանքները տանելու ժամա-
 նակ (մեղոկների, ուտիլի, հին յերկաթների հավա-
 քում, փոխառութեան տարածումն և այլն) կոլլեկ-
 տիվներում ստեղծվում եյին հարվածային բրիգադա-
 ներ, շտարներ, կոմիսյաններ, յեռյակներ և այլն: Այդ
 դեպքում խորհրդի դերը կայանում եր միայն ընդհա-
 նուր, ձևական ղեկավարութեան մեջ:

Վորպեսզի հետագայում նման դրութեան առաջ
 կանգնած չլինենք, հարկավոր է փոքրացնել խորհրդի
 կազմը, հասցնելով 6—8 հոգու, այսինքն՝ ողակավար-
 ներ, կոլլեկտիվի նախագահը, պատի լրագրի խմբի-
 լեզիայի, նախագահը և կոլվարը:

խորհուրդը հանդիսանում է կոլլեկտիվի ամենու-
 րյա աշխատանքների կոլլեկտիվ ղեկավարը, ինչպես
 տեսնում ենք, խորհրդի պարտականութեանները և
 խնդիրները բավական մեծ են: Յեվ յեթե նա կարո-
 ղանա հաջողութեամբ իրագործել այդ խնդիրները,
 հիմնվելով պիոներների ինքնագործունեութեան վրա,
 այդ դեպքում իսկապես պիոներական կոլլեկտիվը
 կդառնա իրենց՝ յերեխաների կազմակերպութեանը և
 վոչ թե կազմակերպութեան յերեխաների համար: Կոմ-
 յերիտմիութեան 6-րդ կոնֆերանսն առանձին ուշա-
 դրութեան է դարձնում այդ խնդիրն. կոնֆերանսի
 վորոշումների մեջ ապում է. «Անհրաժեշտ է վճռական
 պայքար մղել ղեկավարութեան սխալ մեթոդների դեմ,
 վորոնք իրենց՝ յերեխաների կազմակերպութեանը

դարձնում են կազմակերպութիւնն յերեսաների համար:

Բջիջները, պիտներական կողակտիվի աշխատանքները ղեկավարելիս պետք է յենեն դրանից, պետք է հենվեն վոչ միայն կողմարի վրա, այլ առաջին հերթին յերեսաների, խորհրդի, կոմյերիտական կորիզի վրա»:

Խորհրդի նշանակութիւնն ինքնագործունեյութեան զարգացման գործում շատ մեծ է, բայց գծախտութիւնը նրանումն է, վոր շատ կողակտիվներում, մասնավորապէս գյուղական, դեռ այդ ուղղութեամբ շատ քիչ հաջողութիւններ ունենք:

Կողմարը մոռացութեան է տալիս այն կենդանի աղբյուրը, վորը կոչվում է պատանեկական ակտիվ և յերեսաների ինքնագործունեյութիւն, իսկ տիրապետելով, գործի գցելով այդ ուժեր, կարելի չէ խոշոր աշխատանքներ կատարել:

Կողմարներ, ապա լավ նայեցեք և պիտներներ մեջ դուք կգտնեք տասնյակ ակտիվ, խելացի յերեսաներ, վորոնք կարող են լինել կողակտիվի աշխատանքների լավագույն կազմակերպիչները, վորոնք ձեր ամենալավ ընկերները և ոգնականները կարող են լինել:

Կողակտիվի խորհուրդը՝ դա այնպիսի մի կազմակերպութիւն է, վորը կարող է լրիվ և ճիշտ կերպով ոգտագործել այդ ուժերը կողակտիվի աշխատանքների ղեկավարման գործում:

Խորհրդի աշխատանքը կարելի չէ բաժանել յերկու մասի: Առաջին մասն.—կարելի չէ այսպէս անվանել,—նիստայինը, վորի աշխատանքը կայանում է

դանազան խնդիրների քննութեան մեջ, ծրագրերի մշակման, հաստատման, աշխատանքների կատարման, ստուգման մեջ և այլն, իսկ յերկրորդ մասը — վերաբերում է ողակային հավաքույթների համար ողակավարների պատրաստելուն:

Ինչպէս առաջին, նույնպէս և յերկրորդ մասը միասին, ընդհանուր առմամբ չպետք է դրողեցնեն յերկու ժամից ավելի ժամանակ:

Խորհրդի հավաքույթին պատրաստվելու կարգը կայանում է հետեյալում՝ կողմարը նախագահի հետ միասին նախորդ մշակում և խորհրդի որակարգը և ողակավարների պատրաստման ծրագրերը: Խորհրդում նախագահում է վոչ թէ կողմարը, այլ խորհրդի՝ նախագահը: Խնդիրների քննութեան կարգն ամբողջովին պետք է կառուցվի յերեսաների ինքնագործունեյութեան, ակտիվութեան զարգացման վրա: Պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, վոր պիտներներն զգան, թէ իսկապէս իրենք պատասխանատու յեն կողակտիվի աշխատանքների համար: Այդ պատճառով նախ յերեսաներին պետք է հնարավորութիւն տալ աբտահայտվելու դրված խնդիրների շուրջը, ապա նոր կողմարին: Պետք է բոլոր հնարավոր պայմաններն ստեղծել՝ յերեսաների մեջ ինքնաքննադատութիւնը զարգացնելու համար, վորովհետեւ առանց ինքնաքննադատութեան՝ յերեսաների ինքնագործունեյութեան մասին խոսք անգամ չի կարող լինել:

Յեթե կողմարի և խորհրդի միջև տարաձայնութիւններ են առաջանում, այդ դեպքում հարցի լուծումը հարկավոր է տեղափոխել կոմյերիտական բջիջի բյուրոն: Կողակտիվի խորհուրդը կարող է բջիջի առաջ

հարց հարուցել՝ ազատելու կողմարին կողակտիվի աշխատանքներից, յեթե նա գտնում է, վոր կողմարը անհարազատ, դասակարգային սխալ գիծ է տանում, կամ միանգամայն անպետք է իր աշխատանքների համար: Կողմարի «անսխալական» լինելու մասին յեղած խոսակցությունները պետք է դեն շարտվեն: Կողմարի աշխատանքները վոչ միայն կոմյերխումիության բջիջի կողմից ստուգման պետք է յենթարկվեն, այլ և յերեխաների, առաջին հերթին կողակտիվի խորհրդի կողմից:

Պատրաստելով ողակավարներին առաջիկա աշխատանքների համար, հարկավոր է նախապատրաստել, մշակել բոլոր այն հարցերը, վորոնց պիտենենք պետք է հանդիպեն առաջիկա տաս-տասն և հինգ որվա մեջ:

Այստեղ անհրաժեշտ է մանրամասնորեն քննության առնել՝ թե ինչպես պետք է կազմակերպել այս կամ այն աշխատանքը, ինչ անցկացնել ողակային հավաքութեամ ֆիզկուլտուրայից, խաղերից, ինչպիսի յերգեր սովորեցնել և այլն: Այս բոլորը հարկավոր է սովորել հենց խորհրդի հավաքութեամ: Բայց այդ վերաբերում է վոչ միայն խաղերին, յերգերին, կարելի յե ամբողջ կազմով հարկ յեղած դեպքում նախորդ գնալ ուսումնասիրել որինակ լագերի կամ եքսկուրսիայի վայրը և այլն:

Ահա նման պայմաններ ստեղծելով, կարելի յե հասնել այն բանին, վոր յերեխաներն իրենց կազմակերպության լավագույն ողնականները, մասնակիցները լինեն ու մեծ հոգատարությամբ և ինքնուրույն

կերպով զբաղվեն կողակտիվի ողակի աշխատանքներով:

Կողակտիվի խորհրդի նիստ հարկավոր է հրավիրել վոչ ավել, քան շաբաթը մեկ անգամ, կամ հինգ որը մեկ:

Հինգերորդ.— Կողակտիվի խորհուրդն ընտրում է՝
1) խորհրդի նախագահ, վորը հետեվում է խորհրդի վորոշումների կատարմանը յեվ կողմարի հետ միասին ուղղություն է տալիս կողակտիվի, ողակների աշխատանքներին, 2) խորհրդի քարտուղար, վորն զբաղվում է կողակտիվի հուշատետքների յեվ տեխնիկական գործով:

Մինչև կոմյերխումիության 5-րդ կոնֆերանսը կողակտիվում ընտրովի նախագահ գոյություն չունեի: Հաջի տանելով յերեխաների մասնակցության անհրաժեշտությունը կազմակերպության աշխատանքները կարգավորման մեջ, 5-րդ կոնֆերանսում վորոշում են անցնել ընտրովի նախագահ ունենալու ձևին, վորն իսկապես պետք է հանդիսանա կողմարի ողնական: Այդպիսով հարկավոր է յերեխաների, պիտեների միջից դաստիարակել, պատրաստել կողմարի լավագույն ողնականները. տալով նրանց հետաքրքիր աշխատանք, խորհրդակցելով նրանց հետ կողակտիվ գործերի շուրջը և այլն:

Ի՞նչ է անում խորհրդի նախագահը. — Նրա գործնական աշխատանքը կայանում է հետևյալում:

1.— Կողմարի հետ միասին նախագահը կազմակերպում է պիտեներներին զանազան պարապմունքների համար, հավաքութեամ անցկացնում, կազմակերպում է խմբակներ, յերեկութներ, խաղեր, կողակտիվ ող, եքսկուրսիա, զբոսանք, յերգեր և սովորեցնում,

փորձնական հետազոտական աշխատանք ե կազմակերպում (բնության մեջ, այգում, բանջարանոցում):

2.—Հանդիսանում է բոլոր ողակալարների ամենամոտ ընկերը (վոչ Թե պետը), իհարկե նույնպես և պիոներների: Նրանց հետ խոսում է ամբողջ կողլեկտիվի և առանձին ողակների աշխատանքների շուրջը, Թե ինչ նորությունները և հարկավոր մտցնել, ինչպես աշխուժացնել աշխատանքները և այլն: Աշխատում է հեռու չպահել իրեն մյուս պիոներներից, պիոներների հետ շատ լինել և մասնակցել նրանց աշխատանքներին:

3.—Գումարում ե խորհրդի հավաքույթ, նախագահում ե այդտեղ: Կովարի հետ նախորոք խորհրդակցում ե ե մշակում խորհրդի ու կոլեկտիվի ընդհանուր հավաքույթի կարգը, վորը հետո քննության ես առնում որակավարների հետ միասին:

4. — Անպայամանորեն կարգում ե պիտնեբաղան
թերթի յուրաքանչյուր համարը, պիտնեբաղան աւտի-
վի հանդեսը: Յեթե կարևոր նյութ ե լինում՝ առանձին
նշանակում ե ողակում կարգալու, կամ խորհրդում
քննելու համար:

5.—Առանձին տեղերում նշանակում և խորհրդի կողմից աված առաջադրություններն ողակներին, կոմիտեաներին, առանձին պիոներներին և այլն:

6.—Հետևում է խորհրդի կողմից դրված առաջադրությունների ճիշտ կատարմանը: Մտածում է յուրաքանչյուր անգամ, թե ինչ հետաքրքիր աշխատանքներ, առաջադրություններ կարելի յե տալ ողակներին (խաղեր, յերեկույթ, ընթերցում, զբոսանք, հասարակական աշխատանք և այլն):

7.—Ամեն շաբաթվա վերջում ստուգում ե, թե վորքանով ճիշտ ե անցնում ողակներում աշխատանքի հաշվառումը:

8.—Նախագահն աշխատում և հավաքույթից դուրս ևս կազմակերպել պիտոններին հետաքրքիր և ոգտակար զբաղմունքի համար։ Աշխատում և գրավել, մասնակից անել և անկազմակերպ յերեխաներին, մոտեցնել նրանց պիտոններին։

9. — Իր բոլոր ձեռնարկումներին, մտածված գործնական աշխատանքների, ինքադրությունների, տարակուսանքների մասին, նախագահը խորհրդակցում է և կողմարի հետ և յուրաքանչյուր գործն անց է կացնում նրա միջոցով, նրա հետ միասին: Կողմարի հետ խոսում և պիտոներների տրամադրությունների մասին, նրանց դժգոհության մասին այս կամ այն բանից, պիտոներների անկորրեկտության մասին և այլն, և նրա հետ քննում և այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են վերացնելու համար յեղած բացելը, ուղղելու համար այս կամ այն պիտոներին: Ինչպես տեսնում ենք, խորհրդի նախագահը բավական մեծ պարտականություններ ունի, նրա աշխատանքը բավական մեծ է: Կողմարի վրա պատասխանատու խնդիր է դրվում՝ ստեղծել բոլոր հնարավոր պայմանները, վորպիսզի խորհրդի նախագահն իր դերն ու խնդիրներն ինչքան կարելի յե լավ իրագործե: Ձի կարելի նրան գործակատարի վերածել, վորն անխոս, առանց հակաձառելու կատարի «տիրոջ» — կողմարի կարգադրությունները: Նախագահն այն դեպքում կարող է կողմարի անջ թեք և ոգնականը լինել, պիտոներների ինքնագործունեյության զարգացման ոժանդակողը:

լինել կողեկտիվում, յեթե նա ամեն քայլափոխում խնամակալության տակ չի առնվում կողմերի կողմից, յեթե կողմերը բավական հավատ ե ընծայում նրան, յերբ նախադահն զգում ե, վոր ինքը պատասխանատու յե կողեկտիվի աշխատանքների համար, յերբ կողմերը միևնույն ժամանակ ընկերական ոգնություն ե ցույց տալիս նրան:

Վեցերորդ. — «Հասարակական յել մյուս աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ յեղած դեպքում կոլլեկտիվը կարող ե իրենց կից սեղծել կոմիտեներ, վորոնք պարբերաբար ընտրվում են յել աշխատանքում կոլլեկտիվի խորհրդի ցուցմունքներով, նրա ղեկավարության տակ: Կոլլեկտիվն իր բոլոր աշխատանքներն ձգտում ե սանել ողակի միջոցով: Դրանից բացի կոլլեկտիվում կարող են սեղծվել նայել, կամավոր սկզբունքների վրա, զանազան խմբակներ, վորոնց մեջ ընդգրկվում են յել վոչ պիտեներ: Այդ դեպքում կոմիտեների նախագահները յել խմբակների ավագները մասնակից են արվում խորհրդի աշխատանքներին»:

Խմբակների մասին կողմերների ե ընդհանրապես պիտեներ աշխատողների մեջ բավական վեճեր են յեղել: Մի քանիսը գտնում եյին, վոր խմբակները խանգարում են, քայքայում են ողակների աշխատանքները: Բայց կոմյերիտմիության 5-րդ կոնֆերանսն իր վորոշումների մեջ մատնանշել ե, վոր «անհրաժեշտ ե աշխատանքի ձևերը հարմարեցնել բովանդակությանը (չվախենալ խմբակներ ստեղծելուց, անհատական ե խմբային աշխատանքներ տանելուց), սակայն ապահովելով ողակների, կոլլեկտիվների նախաձեռնող դերը:

Խմբակների դրական ե արժեքավոր կողմերից մեկն այն ե, վոր նրանց միջոցով հեշտ ե գրավել անկամակերպ պատանեկությանը, վորոնք հետաքրքրվում են աշխատանքի զանազան տեսակներով: Այդպիսով խմբակները կարող են դառնալ պիտեերական կազմակերպության շարքերն ավելացնող աղբյուրներից մեկը:

Յոթերորդ. — «Ամեն մի կոլլեկտիվ այսպես ե կոչվում «այս ինչ բջիջին կից կոլլեկտիվ»: Շրջանի բոլոր կոլլեկտիվներն ունեն իրենց համարը»:

Ութերորդ. — «Կոլլեկտիվն իր ընդհանուր հավաքույթներն ե ունենում՝ եսկուրսիաների, գրույցների, կամայականների մասնակցելու համար. նույնպես բոլոր կարեվոր հարցերը քննության առնելու յել վորոշելու, պիտեների հեռացման յել ընդունելության համար:

Կոլլեկտիվի բոլոր հիմնական վորոշումները հաստատվում են ընդհանուր հավաքույթում»:

Առաջին. — «Կոլլեկտիվի աշխատանքներ յավ տանելու համար, կոլլեկտիվը բաժանվում ե ողակների, յուրաքանչյուր ողակում 10 հոգի: Ողակները կազմվում են ըստ տարիքի (10—12 տարեկան, 12—14 տ., 14—16 տ.) ըստ ընդհանուր զարգացման յել մեքումության»:

Աշխատանքներն արագ կատարելու համար, ավելի ձկուն լինելու համար, կարևոր ե, վոր կազմակերպությունը շատ ծանրաշարժ չլինի: Ահա ինչու յե կոլլեկտիվը բաժանվում ողակների: Ողակներն իրենց կազմում ունենալով փոքր թվով պիտեերներ, կարող են հաջողությամբ կատարել աշխատանքները ե հարմարացնել այն յերեխաների պահանջներին-ուժերին:

Ողակների բաժանման ժամանակ պետք է պահպանել տարիքային սկզբունք, վորովհետև տարբեր տարիքի յերեխաների զարգացման մեջ զգալի տարբերություն է նկատվում: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մտերմության վրա: Վերևից չնշանակել նրանց այս կամ այն ողակում, այլ թույլ տալ, վոր իրենք խնքնակամ կերպով հավաքվեն և ողակ կազմեն: Յեթե կոլլեկտիվի մեջ գտնվում են մոտակա գյուղերից պիոներներ, այդ դեպքում նպատակահարմար է առանձին գյուղերի պիոներներից առանձին ողակներ կազմել, թեկուզ 7—8 հոգի լինեն նրանք: Յեթե կոլլեկտիվը գտնվում է մեծ գյուղում և պիոներները խումբ-խումբ ցրված են հեռու թաղերում, կարելի չի ողակներ կազմել ըստ թաղերի: Տեսնենք, թե ինչպես են կազմվում մեր կոլլեկտիվներում ողակները: Այդ դործը շատ դեպքում հետևյալ կերպ է ընթանում:

Կոլվարը վերցնում է ցուցակը, բաժանում այդ ցուցակով բոլոր պիոներներին 10—11 հոգու և իմանում, թե քանի ողակ պետք է ունենալ: Դրանից հետո թղթի վրա սյունյակներ է գծում և համաձայն ողակների թվի, սկսում է այդ սյունյակներում գրել յերեխաների անունները: Լավագույն դեպքում նա հաշվի չի առնում յերեխաների հասակը, հավասարաչափ բաժանում է աղջիկներին և տղաներին, յերբեմն էլ հաշվի չի առնում մտերմությունը: Գրելուց հետո գալիս է կոլլեկտիվի խորհուրդը, ողակավարներին պատմում է նոր բաժանման մասին և կարգում ցուցակը: Յեթե պիոներներից վորեւ մեկը համաձայն չի լինում, կոլվարը յերբեմն նրա հետ համաձայնվում է

բայց հաճախ ամեն կերպ պաշտպանում է իր առաջարկները: Հաստատեցին: Կոլլեկտիվի ընդհանուր հավաքույթում կարգացվում է նոր ողակների կազմի ցուցակը: Յեւ մեր կոլվարի մոտ ստացվում է այն պատկերը, ինչ վոր լավ տիրոջ մոտ—«Փոքրերը փոքրերի հետ, միջակները—միջակների հետ, ամեն ողակում է տղա և աղջիկ, և անկարգապահ: Կարծես ամեն ինչ լավ լինի, բայց հենց առաջին իսկ որից մեկ այս ողակում, մեկ մյուսում աշխատանքներն առաջ չեն գնում, սկսում են ողակները ձուլ, ինչպես չյուղած անիվներ: Լինում է ավելի վատ, յերբ կոլվարն առանց խորհրդի, առանց ընդհանուր հավաքույթի, ինքն է բաժանում ողակների: Կան նաև կոլվարներ, վորոնք կանգնեցնում են կոլլեկտիվն ըստ հասակի մի շարքի հրահանգ են տալիս՝ «մեկից տասը համրիր», վորից հետո հայտարարում են — «Այս տասնյակն առաջին ողակն է, հետևյալը՝ յերկրորդ և այլն: Դա սոսկալի կոպիտ սխալ է, վորի դեմ պետք է ուժեղ պայքարել. լայն բացատրական աշխատանքներ տանելով ողակների կառուցման ճիշտ ձևի մասին:

Յերկրորդ.—Տեսնենք հիմա, թե ինչ պետք է անեն ողակները, ինչով պետք է զբաղվեն: Կազմակերպչական կառուցվածքում ասվում է.—«Ողակը նշում է պիոներների համար աշխատանքի հետաքրքրական յեւ ոգստիկ տեսակներ, ամեն մի պիոներին առաջադրույուն է տալիս: Աշխատում է, վոր պիոներները գիտելիքներ յեւ ունակույուններ ձեռք բերեն: Ուղղույուն է ցույց տալիս այս կամ այն գործով հետաքրքրող պիոներների աշխատանքներին:

Բացի այդ ողակը խորհրդին առաջադրում է կոլ-

լեկտիվի, ողակի կյանքին վերաբերող մի օտար խնդիր-
ներ: Ողակը ձգտում է գրավել յեվ իր ափսոսանքներին
մասնակից դարձնել նայել անկազմակերպ յերեսաներին»:

Բայց սովորաբար ողակները կատարում են մի-
այն այն, ինչ վոր հանձնարարում է նրանց կոլեկտի-
վի խորհուրդը, նրանց աշխատանքների մեջ չկա նա-
խաձեռնություն: Ինքնուրույն աշխատանքներ ձեռ-
նարկող ողակների թիվը քիչ է: Սովորաբար ողակը
կոլեկտիվի խորհրդից է աշխատանք վերցնում (ավելի
ճիշտ կոլվարից), աշխատանքի ծրագիրը նույնպես
այնտեղից է տրվում: Այսպիսով դուրս է գալիս, վոր
յերեսաններն իրենք վոչինչ չեն անում, սպասելով կոլ-
վարից հրահանգների: Դրա շնորհիվ կոլվարն այն
կարծիքին է ողակների մասին, վոր պիտներներն
առանց նրան վոչինչ չեն կարող անել, վոր նրանք
չեն կարող տանել այս կամ այն աշխատանքը, վորով
շարունակ ինքն է զբաղված:

Հետևանքն այն է լինում, վոր պիտներները չեն
տեսնում, թե ինչ է կատարվում իրենց շուրջը, նրանք
չեն նկատում այն կենսական յերևույթները, վորոնց
պետք է անպայմանորեն արձագանքեն, չեն նկատում
այն գործերը, վորոնք պետք է իրենք կատարեն: Իսկ
դա տեղի յե ունենում այն պատճառով, վորովհետև
սովորել են մտածել, թե «կոլվարը թող հոգ տանի,
նա մեզ աշխատանք կտա, նորություններ կմտցնի և
այլն»:

Մեր ողակները սերտ կերպով կապված չեն իրար,
պիտներները մոտիկ, մտերիմ չեն միմյանց հետ: Կան
այդպիսի ողակներ, վորտեղ լավ հիմքերի վրա դրված
ինի ընկերական փոխադարձ ոգնությունը, վորտեղ

ամբողջ կոլեկտիվը անհրաժեշտ դեպքում պաշտպանի
իր անդամներից վորևիցե մեկին: Այդպիսի որինակներ
շատ քիչ կգտնեք:

Իսկ ինչ է ներկայացնում իրենից ողակային
հավաքույթը, հավաքվում են մեծ ուշացումով, այն ել
վոչ բոլորը: Ողակավարն անց է կացնում խորհրդի
սովորական առաջադրությունը, այսինքն անհետա-
քրքիր, չոր զրույց: Այնուհետև ողակը խաղում է մի
քանի անգամ կրկնված խաղը «յերրորդն ավելորդ եր»,
կամ թե յերգում են «Առաջ ընկերներ», կամ մեկ ու-
րիշ ծամած յերգ. մի քիչ խոսում է հուշատետրի,
թղթակցությունների, վզկապի և ելի կարգապահու-
թյան մասին ու հավաքույթը վերջացնում: Պիտներ-
ները նստում են տիկնիկների նման և վոչ մի խոսք
բերաններից բաց չեն թողնում, կամ թե չե, յերբ
բավական ձանձրալի և անհետաքրքիր է լինում,
սկսում են աղմկել և կողմնակի գործերով զբաղվել:
հենց վոր ողակավարը հայտարարում է հավաքույթի
վերջանալու մասին, բոլորը վեր են թռչում տեղերից,
ծիծաղում, կատակներ անում, մի խոսքով ռախսանում
են, կարծես մի ծանր բեռ ուսերից գցած լինեն: Ուրախ
և հետաքրքիր է խմբակներում, արհեստանոցներում,
բայց աշխատանքի այդ մասն ողակներով չի կատար-
վում, այլ «կամավոր» կերպով, ինչպես պիտներներն
են ասում: Ուրախ և հետաքրքիր է յերեկույթում,
բայց... տխուր անհետաքրքիր է ողակում—այնտեղ
գնում են ըստ պարտավորություն:

Մենք չենք ուզում ասել, վոր ամեն տեղ ողակ-
ների աշխատանքն այդպես է ընթանում: Դա իհարկե
անարդարացի կլիներ, բայց մեծ մասամբ ողակների

դրությունը շատ քչով և տարբերվում վերև բերված որինակներէց:

Այդպես և յեղել մինչեւ հիմա. բայց այդպես չպետք և լինի այսուհետեւ:

Աւստրալիական բնութայն մասին. — Սկզբում մենք մատնանշեցինք, վոր շատ քիչ և այն ողակների թիվը, վորոնք իրենք ինքնուրույն կերպով խնդիրներ են դնում և կոլլեկտիվ կերպով լուծում տալիս դրանց:

Պետք է աստիճանաբար հրաժարվել ողակներին առաջադրություններ տալուց, պետք է վերջ տալ ողակների համար վերևից ծրագրեր կազմելուն, հարկավոր և սովորեցնել պիոներներին գտնել, ընտրել իրենց համար անհրաժեշտ ոգտակար աշխատանքը և ծրագրել այդ աշխատանքները: Նրանց, այդ բանին կարելի չէ վարժեցնել վոչ միայն պատմելով նրանց, թե ինչ կարող են անել, այլ և կազմակերպելով, տանելով նրանց կոլտնտեսություն, խրճիթ-ընթերցարան, անկազմակերպ յերեխաների հավաքման վայրերը, բացատրելով նրանց, թե ինչ կարող են անել պիոներները, ինչով կարող են ոգնել և աշխատել:

Այդպես, աստիճանաբար, մենք պետք է պիոներներին սովորեցնենք իրենց միտքը, ուշադրությունը պատրաստ պահել թե՛ ինչ կարող է այստեղ ողակն անել, կամ յետ ինչ ոգտակար գործ կարող եմ անել, սովորեցնենք, թե ինչպես կարող են գործադրել իրենց ուժերը:

Այստեղ ևս մենք հիշեցնում ենք: Խնամակալութեամբ մի՛ զբաղվեք, բայց միևնույն ժամանակ դիտողի դերում մի՛ մնաք: Մի՛ մոռացեք, վոր դուք կոլվարներ եք, և այդ պատճառով պարտավոր եք ոգնու-

թյան գալ պիոներներին, յիժե նրանք ընկնում են «անյեկանելի» դրության մեջ:

Յերբ յերեխաներն աշխատում են հաղթահարել զժվարությունները, այդ դեպքում բարձրանում և նրանց ակտիվությունը, բայց յերբ սկսում է հատնել նրանց ուժը և չեն կարողանում վոչ մի կերպ վերացնել այդ զժվարությունը, սկսում են հուսահատվել: Այդ դեպքում հարկավոր է նրանց ոգնության հասնել, բայց այնքան և այնպես, վոր նրանք նորից դպան, թե իրենք կարող են արդեն հաղթահարել զժվարությունը և առաջ տանել գործը: Հետևեցեք, վորպեսզի պիոներները հասցնեն սկսած աշխատանքը մինչև վերջը: Համարձակություն, յեռանդ, աշխուժություն ներշնչեցեք նրանց. այդ ձեր կարևոր խնդիրներից մեկն է:

Ողակային հավաքույթների մասին. — Ողակային հավաքույթը հանդիսանում է աշխատանքների անցկացման և հաշվառման մի տեղ, վորտեղ պիոներներն անհրաժեշտ ուղղություն, ցուցմունքներ են ստանում իրենց գործունեության մասին և կոլլեկտիվ կերպով անց են կացնում այս կամ այն պարագմունքը:

Ամեն մի հավաքույթի նախորդակին ողակավարը պետք է կազմի փոքրիկ ծրագիր, թե ինչ է հարկավոր անցկացնել ողակում. ծրագրում ճիշտ կերպով պետք է դասավորել ժամանակը, այն հաշվով, վոր հավաքույթը 2—2½ ժամից ավելի չլինի: Վորպեսզի ողակի հավաքույթները լավ կազմակերպված անցնեն, հարկավոր է, վոր ողակն իր մեկ ամսվա ծրագրի հիման վրա կազմի առաջիկա 3—4 հավաքույթների ծրագրերը: Այդ գործով պետք է զբաղվեն ողակավարը և ոգնա-

կանը, և զնեն ողակի ընդհանուր հավաքութի քննությանն ու հաստատությանը. հենց այդտեղ ել արվում են առանձին հայտարարություններ ողակի բոլոր պիոներներին ծրագրի զանազան մասերի կատարման համար:

Ողակի հավաքութիւնները կարելի չե յերբեմն անցկացնել այս կամ այն պիոների ընտանիքում: Դա կողմնի յերեխաների սերտ կապին, մտերմության, հնարավորություն կա ծանոթանալու իրենց անդամներից յուրաքանչյուրի ընտանեկան կյանքի հետ և, մյուս կողմից ել՝ ծնողները հնարավորություն կունենան մոտիկից ծանոթանալ ողակիների պիոներների աշխատանքների հետ:

Յերրորդ. — Ողակն բնօրում ե յուր միջից ողակավար յեկ ոգնական, վորոնք վեց ամիսը մեկ անգամ վերբնօրվում են»:

Ողակավարների ընտրությունը պետք ե անցկացնել ամբողջ կազմակերպության մեջ միաժամանակ, տարին յերկու անգամ:

Դա շատ կարևոր կամպանիա չե, վորին պետք ե մասնակցեն բոլոր պիոներները և անկազմակերպ յերեխաները, և վորտեղ բոլոր ողակներն ամիոփում են, հաշվի չեն առնում իրենց կես տարվա կատարած աշխատանքները, վորտեղ ամբողջ կազմակերպությունն ստուգում ե իր աշխիվին: Ողակավարների ընտրության ժամանակ շատ կարևոր ե հաշվի առնել լավ ողակավարներով ապահովելու անհրաժեշտությունը: Այդ գործի համար անհրաժեշտ ե առաջ քաշել լավագույն, աշխիվ պիոներների, բանվորների, բատրակների,

քի, չքավորների, կոլխոզնիկ գյուղացիների յերեխաներին և վարձով աշխատող պիոներներին:

Պետք ե ընտրել գործույն պիոներներին՝ կոլեկտիվի այդ հիմնական բջիջի-ողակի աշխատանքները ղեկավարելու համար, և վոյ թե շատախոսների, վորոնք կարողանում են միայն գեղեցիկ ճառել, իսկ գործը յերեսի վրա չեն թողնում: Կոլվարը չպետք ե ստիպի ընտրելու այս կամ այն պիոներին, այլ իրենք-ողակները թող ինքնակամ կերպով ընտրեն իրենց միջից նրանց, վորոնց ցանկանում են:

Պարտադիր չե, վոր անպայման տվյալ ողակի ողակավարը լինի հենց այդ ողակից. կարելի չե ընտրել նաև մյուս ողակիներից:

Այսպիսով. — Ողակը հանդիսանում ե պիոներական կազմակերպության աշխատանքային բջիջը: Դրելավորապես այդտեղ են կատարվում կոլեկտիվի աշխատանքները: Այդ պատճառով ողակը պետք ե միաձուլված լինի, ամուր կոլեկտիվ կազմի, նա պետք ե ունենա ուժեղ ղեկավարություն:

Առաջին. — «Նոր պիոներների բնօրվում և յորհրդի միջեւ շեղումը»
Զոցով, կոլեկտիվի բնօրվում հավաքույթի հաստատւթյամբ: Մեկ ամսից հետո (վոյ ուե) յորհուրդը վորոշում ե՝ արդյո՞ք բնօրվում յերեխան ծանօթ ե բավական չափով որեմեների հետ յեկ կատարում ե այդ վորից հետո մոտակա հեղափոխական տոնի (մայիսի 1-ը, նոյեմբերի 7, միջ. պատ. տարծ. յեկ այլն): Բոլոր նոր բնօրվումները կուսակցության յեկ կոմյետիսմիտրյան ներկայացուցիչների ներկայությամբ հանգիստ-

վոր յերդում են քալիս, վորից հետո միայն ընդունվողը կարող է վզկապ կապել յեւ նշան կայցնել»:

Յոլլեկտիվի մեջ ընդունվող յերեխան պետք է ապացուցի, վոր նա այդ բոլորն անկեղծորեն և գիտակցորեն է անում: Այդ ամենից լավ կարելի յե ապացուցել մասնակցելով կոլլեկտիվի աշխատանքներին: Այն ողակը, վորն իր շարքերն և գրավել նոր յերեխաներ և խորհրդից թույլտվություն և ստացել նրանց ընդունելու վերաբերյալ, մի քանի շաբաթ նոր ընդունվածներին մասնակից անելով իր աշխատանքներին, պատրաստում է նրանց հանդիսավոր յերգում տալու համար:

Հանդիսավոր խոստումից հետո նորյեկները դառնում են իսկական պիոներներ:

Այդ յերեխաները հանդիսավոր խոստմանը պատրաստվելու ժամանակաշրջանում պետք է հաստատ կերպով ապացուցեն, թե վորքանով են իրենք ցանկանում լինել ակտիվ պիոներներ: Վոչ մի ստուգում, քննություն չպետք է լինի, դրանով մենք հեռ կմղենք անկազմակերպ յերեխաներին: Պետք է կարողանալ կոլլեկտիվի հասարակական աշխատանքների որինակների վրա ցույց տալ նրանց պիոներական կազմակերպության ամբողջ նշանակությունը և միաժամանակ մեր աշխատանքի հետաքրքիր կենդանի ձևերով նրանց գրավել մեր շարքերը: Հարկավոր չե նրանց առաջ ֆորմալ պահանջներ դնել (այս անի, այսինչ բանն իմանալ, պատասխանել հետեյալ հարցին և այլն). հիմնականն այն է, վոր յեռանդուն կերպով ավելի մեծ քանակով պիոներական կազմակերպության մեջ գրավենք պրոլետարական, բատրակ-չքավոր յերեխա-

ներին, ինչպես և կոլխոզնիկներ յերեխաներին: Գրավելով, ընդգրկելով, նրանց մեջ մեծ ցանկություն պետք է առաջացնել աշխատելու բանվոր դասակարգի գործի համար, նրանց ամբողջ յեռանդն ու ստեղծագործությունն ուղղել դեպի հնգամյա պլանի արագ կատարումը, դեպի դասակարգային թշնամու դեմ պայքարելու գործը:

Յեկերդ. — «Պիոներների հեռացումը կատարվում է խորհրդի վորումամբ, ընդհանուր հավաքույթի հաստատմից հետո, որեմների սխեսմասիկ խախտման, պիոներական կարգապահությանը յենթակվելու համար: Նախ քան հեռացնելն անհրաժեշտ է, վոր ողակը, կովարը դասխարակչական միջոցների դիմեն (պարզեն պահանջներ, աշխատեն անհրաժեշտ պայմաններ սեղծել յեւ այլն):

Պիոներների հեռացման գործին պետք է շատ զգուշ մոտենալ: Պիոների այս կամ այն վարմունքը ճիշտ ընորոշելու համար, պարզելու համար, թե այդ վորքանով է սխալ, կամ վատ, հարկավոր է դռնել այն պատճառները, վորոնք դրդել են նրան այդ բանն անելու: Այդ դրդապատճառները պարզելով, միաժամանակ պետք է պիոներին հետաքրքիր, գրավիչ աշխատանքի լծել, խոսել համոզել նրան, պատմել նրան իր արարքի փառը և այլն: Նկատողությանը, վորպես ազդեցիկ միջոցի, պետք է բացառիկ դեպքերում դիմել. մանավանդ շատ բացառիկ դեպքերում պետք է դիմել հեռացման: Հեռացումը միայն այն դեպքում կարելի յե թույլ տալ, յերբ վոչ մի կերպ հնարավոր չե տվյալ յերեխայի վրա կոլլեկտիվում ազդել: Ինչպես ասված է կազմակերպչական կառուցվածքում, պիոներներին դուրս են անում այն դեպքում, յերբ

ներանք սխտեմատիկաբար խախտում են պիտոներակա-
որենքները: Պատանի պիտոներների որենքներն իրեն-
ցից ներկայացնում են կազմակերպության նպատակ-
ները՝ կոնկրետացված յուրաքանչյուր պիտոների համար:
Ամեն մի պիտոն պետք է այդ գիտակցի, շարունակ
հիշի և անշեղ կատարի այդ որենքները: Պետք է
ամեն կերպ աշխատել, վոր յուրաքանչյուր պիտոն
լավ հասկանա, թե ինչու որենքների խախտման հա-
մար, պիտոներին դուրս են անում կոլեկտիվից:

Կազմակերպչական կառուցվածքում ասված է
նաև, վոր հեռացումը կատարվում է կարգապահու-
թյանը չյենթարկվելու համար: Բայց այստեղ պետք
է հիշել, վոր կոմմունիստական կարգապահությանը
չի կարող «զազանակի» վրա հենված լինել, վոր պիտո-
ներական կազմակերպության մեջ պետի հրամաննե-
րին կուրորեն յենթարկվել տեղի չպետք է ունենա:
Պետք է հիշել, վոր կարգապահությանը լինում է այն
դեպքում, յերբ աշխատանքը հետաքրքրում է պիտո-
ներներին, յերբ ամեն ինչ ճիշտ և ժամանակին է
կազմակերպվում, յերբ յերեխաներն զգում են, վոր
իրենք պատասխանատու յեն իրենց ողակի, կոլեկտի-
վի աշխատանքների համար:

Առաջին.— Պիտոներական կոլեկտի-
վի կից կարող են կազմակերպվել հոկ-
տեմբերիկներ յողակներ՝ յուրաքանչյուրը 7—10 հո-
գուց, վորտեղ ընդունվում են 7-ից մինչև 10 տարե-
կան հասակ ունեցող բոլոր յերեխաները: Ամեն մի
ողակը ղեկավարելու համար խորհուրդը տալիս է կոլ-
լեկտիվից մեկական պիտոներ, իսկ նրան ոգնական
ընտրվում է հոկտեմբերիկներից: Յեթե տվյալ կոլեկ-

տիվին կից հնարավոր է կազմակերպել 2—3 ողակ,
այդ դեպքում ողակները համախմբվում են և կազ-
մում մի խմբակ, վորը կից է լինում կոլլեկտիվին, կամ
բազային:

Յերրորդ.— Հոկտեմբերիկավարը կոմյերիտական
է, վորը նշանակված է լինում կոմյերիտմիության բջի-
ջի կողմից: Այնտեղ, վորտեղ հոկտեմբերիկների մի
քանի խմբակ է լինում, բջիջը դրանց համար տալիս
է մշտական աշխատող, վորը ղեկավարում է ամբողջ
բազայի հոկտեմբերիկների խմբակների աշխատանք-
ները:

Յերրորդ.— Հոկտեմբերիկների խմբակն ունենում
է իր խորհուրդը, վորի կազմի մեջ մտնում են հոկտեմ-
բերիկավարը, ողակավարները— փնջավարները և նրանց
ոգնականները: Խորհուրդն զբաղվում է հավաքույթի
պատրաստման խնդիրներով: Հոկտեմբերիկների խոր-
հուրդն իր միջից չի ընտրում մշտական նախագահ և
քարտուղար:

Չորրորդ.— Հոկտեմբերիկները պիտոներական նշա-
նի և վզկապի փոխարեն իրենց կրծքին փակցնում են
կարմիր աստղ: Հոկտեմբերիկից պիտոներ փոխադրվել
կատարվում է խորհրդի վորոշմամբ, յերբ նրանց տա-
րիքը հասնում է 10-ի:

Հոկտեմբերիկներն իրենց կարողության համե-
մատ մասնակցում են կոլլեկտիվի բոլոր աշխատանք-
ներին:

«Քաղաքի յեկ քոլմուսից բոլոր դպ-
տոցներում, վորտեղ սարքեր բջիջներից
կից սարքեր կոլլեկտիվներից պիտոներն են գտնվում,
կազմակերպվում է Ֆուրկոս: Ֆուրկոսը՝ դա առակերս

պիտներների յեվ հոկեմբերիկների համախմբությունն է, դարոցի յեվ աշակերտության փրա կազմակերպված, պիտներական ազդեցության տարածելու համար է:

Ֆորպոսն իրավունք չունի զբաղվել ընդունելության յեվ հեռացման գործով:

*Շրջանային, նահանգային, հան-
ՀԱՄԱՆՄԲՈՒԹՅՈՒՆ քառասունհան և համամիութենական
մասշտաբով բոլոր կոլլեկտիվները համախմբվում են
կոմյերիտմիության կից համապատասխան կազմակեր-
պությունների մեջ:*

Պիտներական կազմակերպության գործնական դե-
կավարություն ցույց տալու համար կոմյերիտական կոմի-
տեներն իրենց կից սեղծում են պիտներ բյուրոներ, վո-
րոնք աշխատում են հասուկ մշակված կանոնադրու-
թյամբ:

Ինչհետև յե հարկավոր կազմակերպություն նման
համախմբությունը: Յեթե այդպես չլիներ, շատ պարզ
է, վոր հախադանց դժվար կլիներ ունենալ միասնա-
կան, ամուր մի կազմակերպություն: Առանց կենտրո-
նացված համախմբություն, ամեն մի կոլլեկտիվ կաշ-
խատեր աշխատ, ինչպես ինքը կցանկանար: Միայն
կենտրոնացված կազմակերպությունն է քրիստոնակ
ճիշտ զարգանալու, կառուցվելու ընդհանուր ծրագրով,
իրագործելով միասնական նպատակները: Կազմակեր-
պությունն աշխատե պետք է կառուցվի, վորպեսզի
կոմյերիտմիության ղեկավարությունն ամուր ապա-
հովված լինի պիտներական կազմակերպության յու-
րաքանչյուր մասում, վորպեսզի յուրաքանչյուր քայ-
լափոխում կոմյերիտմիությունը չզա պիտներական

կազմակերպություն կյանքի պարկերակը (Վոլկով, «Ինչ-
պես է կառուցված պ. պ. կազմակերպությունը»):

«Վորպեսզի մասնակցողի անհա-
որենքները տական կյանքը յենթակա լինի շարժ-
ման նպատակներին, բանաստեղծում են մի շարք բա-
րոյական պարտականություններ (պ. պ. որինքներ.
կոմյերիտմիության 5-րդ կոնֆերանսից):

1.— Պիտներ՝— հավասարիմ է բանվոր դասակարգի
գործին, լեհին, պատգամներին:

2.— Պիտներ՝— կուլակների, բուրժուաների բեմամբ
է, նա բանվորների ինտերնացիոնալի կոյմնակիցն է:

3.— Պիտներ՝— ամբողջ աշխարհի բանվորների, գյու-
ղացիների, աշխատավորների յերեսաների հավասարիմ
ընկերն է:

4.— Պիտներ՝— կոմունիստի յեվ կոմյերիտականի
կրսուր յեղբայրն է, կոմունիստի համար մղվող պայքարում:

5.— Պիտներ՝— պատասխան է դառնալ համարակ
մարտիկ աղիասության յեվ նեման դեմ, սոցիալիզմ կա-
ռուցելու համար:

6.— Պիտներ՝— ձգտում է գիտության, նա ոգնում է
սովորելու մյուսներին: Գիտությունը յեվ կարողությունը՝
ույծ են բանվոր դասակարգի գործի համար պայքարելու
մեջ:

7.— Պիտներ՝— կազապապության կոյմնակիցն է
սովորելու յեվ աշխատանքի մեջ: Հասարակական գույքին
խնամով է վերաբերվում:

8.— Պիտներ՝— պրոֆսիուրյան, խորհրդի, կոոպե-
րացիայի գործույն ոգնակալն է: Պիտներ կարմիր բա-
նակի ոգնակալն է, նրա ապագա մարտիկը:

9.— Պիտներ՝— Գաբրիկաների, գործադանների —

գարգազման, տեխնիկական գիտելիքների, աշխատանքային դիպոցային մանկ կողմնակիցն է:

10.—Պիոները՝ — նացիոնալիստական բեմամուրյան դեմ է յեղ նա բոլոր բանվորների, աշխատավորների ինտերնացիոնալիստական միության կողմնակիցն է:

11.—Պիոները՝ — չփափորի բնկերն է, ակտիվ ոգնականն է բերքի բարձրացման պայքարի գործում. կոլտրեստության, խորհրդային տրեստության յեղ կոմսունայի ոգնականն է:

12.—Պիոները՝ — պայքարում է հարբեցողության, խուլիգանության յեղ կրոնական խավերի դեմ:

13.—Պիոները՝ — բջիջի դրոշի տակ համախմբում ու կազմակերպում է յերեխաներին: Պիոներն ուրիմակ է հանդիսանում բոլոր յերեխաների համար:

14.—Պիոները՝ — ամեն ինչ կատարում է արագ յեղ հետոն: Թանգ է գնահատում իր յեղ ուրիշի ժամանակը: Պիոներն աշխատում է, սովորում է, հանգստանում է կազմակերպված կերպով:

15.—Պիոները՝ — կեղտի յեղ ծխելու բեմամին է: Պիոները պահպանում է իր յեղ ուրիշների առողջությունը:

16.—Պիոները՝ — աշխատանք յեղ համառ է: Պիոները դժվարություններից չի վախենում. շարունակ գվարք յեղ տկուն է:

Առաջին. — Հոկտեմբերիկները ձգտում
ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ԵՆ ԱՊԻՈՆԵՐ ԴԱՆՈՒՄ:
ՈՐԵՆԵՆԵՐՆ ԵՆ

Յերկրորդ. — Հոկտեմբերիկները հետե-
վում են իրենց մարմնի յեղ հագստի մաքրությանը:

Յերրորդ. — Հոկտեմբերիկները սիրում են աշխատել:
Մեր պատանեկական կոմսունայի աշխատանքի խմբերի

առաջ կանգնած է բավական գրավիչ, հսկայական, շքեղ մի նպատակ: Փոխարինել փոխարինողներին կոմյեթեմիտիտյանը. կառուցել կոմսունայի մայր նպատակները, համար բավական չե միայն ըմբռնել նպատակները, հարկավոր է նաև կատարել մի շարք գործողություններ: Հետևապես պիոներական կազմակերպության անդամներն իրենց վրա պարտականություն են վերցնում միանգամայն վորոշ վարք ունեթյուն զարդոցում, ընտանիքում, աշխատանքի վայրում, փողոցում:

«Լողողները», վորոնք իրենց մեջ պարունակում են վարքի և ավանդների կանոնները, դա դրական բան է, վորովհետև նրանք հիշեցնում են մեզ, շարունակ այն մասին, ինչի մասին, վոր մենք պետք է հիշենք: Յիթե մենք ունենանք զրի առած կանոններ, մեր աշխատանքն ավելի ինտենսիվ կլինի... «Ավելի դիտակից վերաբերմունք կլինի դեպի գործը» (Բուխարին — Կոմյեթեմիտիտյան 5-րդ համագումարապատանած ճառից):

Ահա ինչու համար են հարկավոր պատանի պիոներներն որենքները: Որենքները նրա համար են հարկավոր, վորպեսզի նշեն պիոներներին կոնկրետ գործողությունները. այն հաշվով, վոր նրանք ավելի արագ ընթանան դեպի նշած նպատակը:

«Պատանի պիոներներին որենքներն այնպես պետք է կառուցված լինեն, վորպեսզի նրանք կարգավորեն և կառուցված լինեն, վորպեսզի նրանք կարգավորեն և կառուցված լինեն հիմնական կողմերը, այսինքն այնպիսին՝ վորոնք հանդիսանում են ամենաանակալը սոցիալիզմի ապագա մարտիկի մշակման պրոցեսում և միևնույն ժամանակ հասկանալի լինեն պիոներներին:

Վարքի ամենահաւան կողմերը կարգավորելու հետ միասին որեւքներն ու սովորութիւնները պետք է յերեկայի մեջ դաստիարակեն այնպիսի չափանիշ, վոր նրանք կարողանան դնահատել, թե վորն է վատ, վորը լավ» (Կրօնականինա—Պ. շարժման հերթական խնդիրները):

Արտաքին նշանների, խորհրդանշաններ շանների անհրաժեշտութիւնը պատահական կազմակերպութեան մեջ ընդունել է դեռ կոմյերիտմիութեան 5-րդ համագումարը: Արտաքին եֆեկտը, արտաքին տպավորութիւններն ուժեղ ազդեցութիւն են ունենում յերեկայների վրա, նրանք շարունակ պահանջ են դրում վառ, դրավիչ ձևերի: Բայց մինչև հիմա դեռ պիտներական կոլեկտիւմներում հարկ յեղած ուշադրութիւն չեն նվիրում այդ գործին: Շատ պիտներներ, վորոնք վզկապ նշան չունեն, պատվի չեն առնում: Դեռ բավականաչափ պիտներներ և կոլվարներ ունենք, վորոնք չեն պատկերացրել իրենց այդ արտաքին ձևերի հեղափոխական դաստիարակչական նշանակութիւնը, կարծելով, վոր դրանք միայն արտաքին գրավչութեան նշաններ են:

Կազմակերպչական կառուցվածքում ասում է վոր՝

Առաջին. — «Ամբողջ կազմակերպութեան համար սանմանվում է միասնական նշան». «նշանը տրվում է պիտներին վոչ թե վորպես նվեր, վոչ թե բարեգործութեան համար, վոչ թե մարդասիրութեան համար, այլ վորպես տվյալ կազմակերպութեան պատկանալու սիմվոլ, վորի մեջ պիտները մտել և կամավոր կերպով (Կրօնականայա ՌԿՅԵՄ և բոյսկաուտիզմ)՝ նշանը կա-

րնոր է նրանով, վոր նա միաժամանակ խորհրդանշում է կոլեկտիվի նպատակն ու գործունեութիւնը, պիտներական շարժման ամբողջ ելութիւնը: Նշանը կազմակերպութեան և նրա անդամների միջև կապն ուժեղացնում է: Բարձրացնում է պիտներների պատասխանատվութիւնն արարքների համար և ստիպում է նրան ամեն տեղ հանդես գալ, վորպես վորոշ կազմակերպութեան անդամ: Նա պիտներներին պրոլետարական հասարակայնութեան կոնտրոլի տակ է դնում (Վոլկով—Ինչպես է կառուցված պ. կազմ.):»:

Յերկրորդ. — «Բոլոր պատանի պիտներները կարմիր վզկապ են կրում». վզկապը նույն նշանակութիւնն ունի, ինչ վոր նշանը: Հաճախ մեղ մոտ քննութեան են առնում այն հարցը, թե հարկավոր է կապել վզկապ, թե վոչ, և ի՞նչ ժամանակ: Վերևում մենք արդեն մասնաանշեցինք, թե ինչ դեր են խաղում արտաքին նշանները. այնպես, վոր այդպիսի վիճակը միանգամայն անտեղի չեն: Հարկավոր է վերջ տալ նման խռակցութիւններին, բացատրել բոլորին վզկապի նշանակութիւնը և աշխատել ամեն կերպ, վոր բոլորը, մինչև իսկ կոլվարները վզկապ ունենան և կապեն:

Յերրորդ. — Սանմանվում է պիտներների հետեւյալ սանդուք (պատիվը—վոլջույնը) «տո ձեռքի հինգ մատերն աւուր միացված իրար, բարձրացնում են գլխից վերել» Պատիվ—դա վոլջույնի սահմանված ձևն է: Պիտները, վորը հետևում է առողջապահական կանոններին, բարեկու ժամանակ ընկերով կամ մեկ ուրիշի, ձեռքը չպետք է սեղմի, այլ պետք է այնպես անի, ինչպես վոր ասված է կառուցվածքում:

Բարեկի այդ ձևը նշանակում է՝ վոր պիտե՞րը պայքարում ե հինգ աշխարհամասերի պրոլետարիատի հեղափոխական - աղատագրական գործի համար ե դա իր անհատական շահերից միշտ բարձր ե դասում:

Չորրորդ. — «Պիոներները միասնական զգեստ են հագնում: Ամառը կարն ծալվա՞րեն, ցուսիկ, աղջիկները օրջագգեստ — մուգ գույնի յեվ բաց գույնի բլուզ՝ կրծի վրա յերկու գրպաններով: Ձմեռը պիոներները օսֆ, մուգ գույնի զգեստ են հագնում»:

Հինգերորդ. — «Կոլեկտիվն ունենում ե կարմիր գույնի մեկ դրոշակ պիոներական նշանով յեվ նշանաբանով. մի կողմի վրա գրված № 1, 2, 9-րդ յեվ այլն. յեվ այսինչ հիմնադրության, գործարանին, գյուղին կից կոլեկտիվ»:

Վեցերորդ. — «Յուրաքանչյուր ողակ ունի յեվ իր ողակային դրոշակը, հագցրած փայտի վրա, նույնպես կարմիր գույնի, բայց յեռանկյան ձևի»:

Առաջին. — «Բանվոր դասակարգի ՆՇԱՆԱԲԱՆԸ ՅԵՎ ՇԱՆԳԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄԸ պայքարի գործին յեղիր պատրաստ» — պատասխանը «միտ պատրաստ են»:

Մեր ամբողջ դաստիարակական աշխատանքը պետք ե պիտե՞րներին պատրաստի այդ մարտական կանչի իրագործման համար: Պիոներները պետք ե շարունակ ե անշեղորեն, հակառակ բոլոր դժվարությունների, պայքարեն բանվոր դասակարգի գործի համար, ե նրանց պատասխանը, «միշտ պատրաստ ենք» պետք ե ամբապնդի նրանց մարտական պատրաստակամությունը:

Յերկրորդ. — «Սանճանկում ե հանդիսավոր խոստման հետևյալ ձևով՝ Յես, խորհրդային սոցիալիստական հան-

րապետությունների միության պատանի պիոներ, բոլոր բնիկներին առաջ խոսք եմ ասիս, վոր՝

1.— Ամուր կանգնեմ բանվոր դասակարգի գործի համար նրա մղած պայքարում, հանուն ամբողջ աշխարհի աշխատավորության ազատագրման:

2.— Ազնվորեն յեվ անկեղծորեն կկատարեմ իլիշի պատգամները — պիոներական օրենքները»:

Հանդիսավոր խոստումը տրվում ե բոլոր նոր ընդունվող յերեխաների կողմից, յերբ նրանք գործնականորեն ապացուցում են, վոր խկապես ուզում են լինել պիոներներ: Հանդիսավոր խոստումը պետք ե տրվի հանդիսավոր պայմաններում, վորպեսզի յերեխաների հիշողության մեջ անշնչելի ապավորություն թողնի: Պիոներները շարունակ պետք ե հիշեն աշխատավորության առաջ տված իրենց այդ խոստումը:

1. — Ի՞նչ բան ե կազմակերպում ԽՖՆԱՍՏՈՒԳՄԱՆ Թյունը ե ի՞նչու համար ե նա:

2. — Ի՞նչ պիոներական կազմակերպությունը չպետք ե մեծերի կազմակերպության ձևի նման կառուցվի:

3. — Վորտեղ պետք ե կազմակերպվեն կոլեկտիվները:

4. — Ի՞նչպիսի՞ վերաբերմունք պետք ե ունենալ դեպի վոչ պրոլետարական շերտերի յերեխաների ընդունելությունը:

5. — Ի՞նչպես պետք ե հասկանալ այն՝ վոր խորհուրդը հանդիսանում ե աշխատանքների կոլեկտիվ ղեկավարը ե կոլեկտիվի ակտիվի ղալրոց:

6. — Ի՞նչ լրացումներ ե փոփոխություններ պետք ե մտցնել կազմակերպչական կառուցվածքի մեջ՝ յե-

հելով պիտեներական շարժման վերջին տարիների փորձից:

1) Բիւ. Ուլքեր Էն պատանի պիտեները:

2) Վոլկով.— Ինչպես և կառուցված պ. պ. կադմակերպութիւնը:

3) Վոլկով.— Փյուդի կովարին:

4) Կերժենս.— Կադմակերպիւր ինքը քեզ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0194542